ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

27.01.2015թ.
237-ի 7

ՀՀ ֆինանսների նախարար
պարոն Գագիկ Խաչատրյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Խաչատրյան,

Հայտնում եմ, որ ավելի քան 1 ամիս առաջ՝ 2014թ.-ի դեկտեմբերի 18-ին, հարկային մարմին սոցիալական վճարի առավելագույն չափը գերազանցած գումարների վերադարձման մասին դիմում եմ ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարությանը եւ Կենտրոն հարկային տեսչությանը՝ ներկայացնելով պահանջվող բանկային տվյալները: Մինչ օրս, սակայն, իմ սոցիալական վճարի առավելագույն չափը գերազանցած գումարների վերադարձը կատարված չէ, ինչպես նաեւ հարկայնին մարմնից կամ ՀՀ ֆինանսների նախարարությունից ի պատասխան իմ դիմումների որեւէ գրություն չեմ ստացել դիմումներիս ընթացքի վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ի՞նչ ժամկետներում (ե՞րբ) է նախատեսվում իրականացնել իմ սոցիալական վճարի առավելագույն չափը գերազանցած գումարների վերադարձը:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան